

ԶԱՐԵՆԳԻ ՇԱԲԱԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ԲԱԶՄԱՎԵՊ»Ի

Եղիշէ Զարենցի ծննդեան 70ամեակի հանդիսութեանց շարաթը բանաստեղծին մեծ քերթողութեան արուեստին նման եռուղեգոյն եղաւ, հողմային եւ տենդագալար: Եթէ օրեր չարունակ, Երեւանը, յարակից գիւղաքաղաքներն ու հեռակայ քաղաքները, ինչպէս հայ եւ օտար մտաւորականութիւնը, գիտնականներն ու քաղաքական մարդիկը ապրեցան նոյնքան եռուղեգոյն, հեւքոտ կեանք մը, ինչպէս՝ անշիջիլ բանաստեղծութեան գիւթանքին մէջ, որու վրայ կամար կը կազմէր հայրենի գմայլիկ երկինքը, կատարելապէս անամպ՝ Երեւանէն մինչեւ Էջմիածին, Հոկտեմբերեան, Ստեփանաւան, Ապարան, Լենինական, Կիրովական, Դիլիջան եւ Սեւանայ լիճը, ուր կը հասնէր իր գերազույց գեղեցկութեան, գեղեցկութիւն մը՝ որ ներամփոփ եւ ոգեղինացած հողուոյն համար միշտ կը սկսէր ծայրէն, անվերջանալի:

Սեպտեմբեր 25ին, ժամը 11ին, Գեառու գետէն քիչ անդին, ուր Սայեաթ-Նովա, Լեւոնտով եւ Եղիշէ Զարենց փողոցները կը մերձենան իրարու, մարմնաւորելով ծառախոտ պուրակ մը՝ ժողովուրդը խորհուած է մեծ օրերու յատուկ ոգեւորութեամբ:

Հայրենի գրագէտներ եւ բանաստեղծներ, նկարիչներ եւ քանդակագործներ, որոնց անունները ա՛յնքան յաճախակի կը պնդագարդեն արտասահմանեան մեր մամուլին էջերը՝ եկած են պատուելու մեր աղջկին արժանաւոր գաւակներէն մին, Եղիշէ Զարենցը:

Բանաստեղծին յուշարձանին հիմնադրման օրն է:

Բեմին վրայ տեղ գրաւած են Ռ. Խաչատրեան, Ա. Յարութիւնեան, Լ. Ղաւրիբջանեան, Մ. Մելքոնեան, Բ. Մուրաւսեան, Գ. Տէր-Ղազարեան, Ա. Քոչի-նեան, Եղ. Թովչեան, Վարդգէս Համա-

ղասպեան, Անահիտ Զարենցը, հայ եւ օտար մտաւորականներ, բանաստեղծներ, նկարիչներ, գիտնականներ, Սփիւռքէն ժամանած չորս հիւրերը՝ Մառի Աթմաճեան, Գառնիկ Ագաբեան, Վահրամ Մաւեան, Արամայիս Սրապեան:

Խօսք կ'առնէ Ռ. Խաչատրեանը, որ կը խօսի ներշնչեալ, պետական մարդը՝ որ հանդէս կու գայ որպէս գրական քննադատ, վերլուծող եւ համադրող միաբ. կը յայտարարէ. — «Զարենց խորապէս ըմբռնեց ժողովրդական գանգումներուն դերը պատմութեան մէջ, դարձաւ «խելագարուած ամբոյսներու» անյադախարելի ուժին մեծ երգիչը: Իր ժողովուրդին դարերով լարուած հոգեւոր աղեղէն նետուած նետն է Եղիշէ Զարենցը: Զարենցը ոչ միայն յեղափոխութեան բանաստեղծն էր, այլեւ յեղափոխութիւնն էր բանաստեղծութեան մէջ»:

Կը յաջորդէ Եղուարդ Թովչեանը, որ ինչպէս միշտ՝ այս առիթով եւս կը խօսի խաղաղ պարզութեամբ, բայց արտայայտած մտքերը արժատական են, անվիճելի. — «Եղիշէ Զարենցի ստեղծագործութիւնը հայ ժողովուրդի հոգեւոր զարգացման նոր շրջանն է ներկայացնում. սոցիալիզմի դարաշրջանը: Զարենց առաջինն էր, որ պոէտական հսկայական ուժով վերարտադրեց դէպի յեղափոխութիւն գնացող ժողովրդի անխորտակելի ոյժը»: Եւ կ'եզրակացնէ. — «Այսօր, նրա 70ամեակի օրը, այն սերունդը, որի մասին երագում էր բանաստեղծը, երախտագիտութեամբ է արտասանում նրա անմահ անուրը»:

Բարձրախօսին առջեւ կ'անցնի Սովետական Հանրապետութեան Գրողներու Միութեան առաջին քարտուղար, գրող եւ բանաստեղծ՝ Ալեքսէյ Սուրկովը. — «Մենք այսօր այս հանդիսաւոր իրադարձութեանը մասնակցում ենք՝ նրա ստեղ-

ծագործութեան, նրա անձնաւորութեան եւ աշխարհի այդպիսի բանաստեղծ տրւած ժողովրդի հանդէպ խորին յարգանքի զգացումով: Մենք այսօր յարգանքի տուրք ենք մատուցում Հայաստանի հրաշալի բանաստեղծի յիշատակին: Յետադարձակարկ գցելով նրա անցած ուղու վրայ, մենք տեսնում ենք, որ դա ուղին է բանաստեղծի եւ գիւտարի, որը յեղափոխութեանը ծառայել է հրացանով եւ զրնձով: Նա իսկական համաշխարհային էր եւ ստեղծագործում էր յանուն բոլոր մարդկանց երջանկութեան եւ ազատութեան: Նա յաւերժ կը մնայ իր ժողովրդի հպարտութիւնը: Թող Հայաստանի այս պայծառ արեւն ու ձիւնագագաթ Արարատը յաւիտեական պահակները լինեն մեր այսօրուան հիմնադրած յուշարձանի»:

Երբ Ա. Սուրկովը կ'աւարտէ իր խօսքը, անհուն լուսեան եւ անշարժութեան մէջ կը շարժի քողը՝ որ կը ծածկէր պաշտօնէ քարը, որու վրայ կը կարգանք. «ԱՅՍ ՎԱՅՐՈՒՄ ԴՐՈՒՆԵԼՈՒ Է ՍՈՎԵՏԱՀԱՅ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵԼՎՈՒ ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆԳԻ ՅՈՒՇԱՐԺԱՆԸ»:

Յուշաքարը չըջապատուած է դափնիներով եւ ծաղկեփունջերով:

Երեկոյեան, Ալ. Սպենդիարեան պետական մեծ թատրոնի երգիչին տակ տեղի կ'ունենայ գրական – գեղարուեստական հանդիսութիւնը:

Աւելի քան հարիւր անձերէ բաղկացած նախագահական կազմի կոնակին՝ յորեւեար բանաստեղծին կենդանադիրն է, անոր առջեւ՝ Երեւանի ժողովրդին մէկ փոքրիկ մասը, մինչ հարիւր հազարաւորներ, իրենց ընտանեկան բնակարաններուն մէջ խոնուած են ձայնափառներն եւ հեռատեսիլին առջեւ, կազմելով միատարր եւ անբաժանելի Հայութիւնը, ի սէր եւ ի յարգանս Եղիշէ Զարենցի:

Հանդիսութիւնը կը բացուի Հայոց աշխարհի քայլերգով, ապա նախագահ Ն. Խ. Յարութիւնեանը կ'արտասանէ իր ներածական խօսքը. — «Ամէն մի ժողովրդի մեծ գաւակների յիշատակները յաւերժ ապրում են իրենաւ ազգային սրբու-

րիւններ, լոյս ու ջերմութիւն հաղորդելով հարազատ ժողովրդի եւ մարդկութեան մտքին ու սրտին: Նա արդէն եւնարկուել էր այն դաժան փորձութիւններին, որոնց դառնութիւնը ճաշակել էին նրա մեծ նախորդները՝ Թումանեանն ու Մեծարեցը, Խաչատրեանն ու Վարուժանը, Տէրեանն ու Սիւմանթօն: Երբ կը գրուի Բանբերոյդ դարի համաշխարհային պօէզիայի պատմութիւնը, այնժամ քերես առաւել յստակ դառնայ բոլորին, քէ ինչ է կատարել Եղիշէ Զարենցը, մարդկային հոգու այդ մեծ ու խիզախ քամբորդը՝ համամարդկային գեղարուեստական մշակոյթի առաջընթացի համար... Ինչպէս բոլոր մեծերը, այնպէս էլ Եղիշէ Զարենցը ունեցել է վերելքներ եւ վայրէջքներ, վրիպումներ եւ մոլորութիւններ: Սակայն այդ ամէնը չի կարող ստուեր նետել մեծ հայրենասէրի վսեմ գործին եւ փառքին, որովհետեւ, ինչպէս ինքն է ասել՝ «հոգիս միշտ սրբել են ճամբքի մահուր հրով եւ ամէն տանջանք տալով եւ սիրով»:

Ապա քառախողովակ բարձրախօսին առջեւ կ'անցնի Հայաստանի սովետական գրողներու միութեան վարչութեան քարտուղար Պարոյր Սեւակը, որուն պաշտօնական բանախօսի հանդամանքով:

Ներամփոփեալ, անշարժ, խոհուն՝ իր հարազատ բանաստեղծի եղական խառնուածքը ի յայտ կու գայ արտասանած խօսքին առաջին մտքերէն իսկ. հարց կու տայ. «Ո՞վ էր Զարենցը» մի քանի երկվայրկեան կը լռէ, ու ձայնը մեղմիւ բարձրացնելով, այլ անփոփոխ պահելով իր քարեղէն անշարժութիւնը՝ կը պատասխանէ. «Բովանդակ աշխարհի վրայ վառուող մի հարաւային արեւ, բովանդակ աշխարհի վրայ սփռուած մի նայիրական անձի տխրութիւն եւ բովանդակ աշխարհը իր ոգու համար հայրենիք ընտրած մի ուղեղ... ահա Զարենցը: ... Նա գիտէր որ իր «աղմկող անուրը» անբաժան կը մնայ իր դարից, «ինչպէս օրը օրացոյցից» այսօր, իր մահից 30 տարի անց, մենք կարող ենք ասել, որ Զարենց իսկա-

պէս էլ մեծ դարձաւ «նշանի տապալում-
քեամբ», բայց նաեւ «նետի մեծու-
քեամբ»: Բնութիւնը՝ նրան երկուսն էլ
տուել էր: Եւ այսօր էլ, իր մահից 30 ամի,
նա շարունակում է մնալ ուսուցիչ»:

Սօսք կ'առնէ Ալեքսէյ Սուրկովը. վե-
րացեալ եւ խանդավառ՝ կը փառաբանէ
Չարենց բանաստեղծը, մարդը, հայրե-
նասէրը, աշխարհագրագրային, յեղափո-
խութեան երգիչը: Ապա յաջորդաբար
բարձրախօսին առջեւ կ'անցնին Վ. Ֆիո-
դորովը, Վիկտոր Կոչեւսկին (հայերէն եւ
ուկրալիներէն), միաժամանակ կարգաւոր
«Եւ իմ անուշ Հայաստանի...» իր կատա-
րած ուկրալիներէն թարգմանութիւնը: Մ.
Սիւլեյմանովիչը, Կարլոյ Կարաքէն, Ջ. Մա-
մեդովը, Ի. Մացիլաիչիուսը, Պ. Բոցուն,
Ա. Վէյանը, Շ. Բէյլենայիւսը, Բ. Քեր-
բարաւը, Կ. Կուլիւսը, Ն. Լեւիտսկիւս-
կին, Յ. Շիւրադը, Ս. Շտրեւսկին, Լ. Կո-
չուսը, Ա. Մենքեւսկին, Ն. Ստոյանը,
Ի. Տաուֆերը, Հ. Հուպերդը, Լ. Ռոբէլը,
Ք. Քովալսկին: Սփռուքի զրոյններու կող-
մէ ելլով կ'ունենայ Գառնիկ Ազգարեանը:

Հայաստանի զրոյններու վարչութեան
քարտուղար Հր. Յովհաննէսեան հանգա-
մանօրէն կ'արտայայտուի Եղիշ Չարեն-
ցի զրականութեան շուրջ՝ համաշխարհա-
յին հափանիչով, միաժամանակ նշելով օ-
տար բազմաթիւ լեզուներով անոր թարգ-
մանութեան պարագան: Ապա կը սկսի
հանդիսութեան ղեկարուստական բաժի-
նը. մեր յիշողութեան մէջ անջնջելի մնա-
ցած են ամերիկեան Մեթրոփոլիթէնի
երգչուհի՝ Լիլի Չուգտարեանի եւ Գոհար
Գասպարեանի երգեցողութիւնները. այս
վերջինս, ի միջի այլոց՝ երգեց.
«Կունենկ»ը, «Յանկամ տեսնել զիմ Կիլի-
կիա»ն եւ «Հայաստան»ը, տառաջիւղէն
փոթորկելով արեւոյտեալ բազմութիւնը:
Հանրածանօթ ամբուսքող Սուրէն Քոչա-
րը արտասանեց յորեկար բանաստեղծին
«Գնդապետ Շաւարշը» մինչ ղերասան
Բարդէն Տէր-Ներսէսեան, կանգնած բե-
մին մէկ խաւարեալ անկիւնը՝ բարձրա-
ձայն կ'արտասանէր բանաստեղծին «Ամ-
բոյնները խեղագործած»ը, որու ներշնչ-

չեալ առողջանութեան կ'արձադանդէր եօ-
թանասուն անձնակազմէ բաղկացած երկ-
սեւ երգչախումբը: Ապա արտասանու-
թիւններ, մեներգներ, սլարեր եւ սլարա-
խումբեր շարունակեցին քակել իրենց ե-
րիզը, մինչեւ ուշ գիշեր:

Նախագահութեան կազմին հանդիպա-
կաց չքեղ ամպիոնին մէջ բազմած էր Ա-
մենայն Հայոց Վեհափառ Հայրապետը,
Վաղէն Ա., իր եկեղեցական եւ աշխար-
հական հետեւորդներով:

Սեպտեմբեր 26ին, նախագահութեամբ
Սիլվա Կապուտիկեանի, Գիտութիւններու
Կաճառին մէջ տեղի ունեցաւ Սովետական
այլ Հանրապետութիւններէն ժամանած
հիւրերու եւ հայ զրոյններու հանդիպում
մը: Սօսեցաւ բանաստեղծուհին, որուն
շարքով յաջորդեցին հիւրերն ու հայրենի
զրոյնները, մեծարանքի՝ եւ յարգանքի
խօսք արտասանելով առ Եղիշ Չարենց:

Սեպտեմբեր 27ին, ժամը 20ին, հայ-
համանուստային դահլիճին մէջ, նախա-
գահութեամբ Գէորգ Էմինի՝ տեղի ունե-
ցաւ բարեկամութեան երեկոյն, մասնակ-
ցութեամբ բազմազգի մտաւորականնե-
րու, որու ընթացքին բանաստեղծներ եւ
զրադէտներ կարգացին եւ արտասանեցին
իրենց զործերէն. այս հանդիպման շուրջ
կարող չենք առաւել մանրամասնել, ո-
րովհետեւ նոյն օրուան միւսեւոյն ժամուն
կը գտնուէինք Կիրովական, ուր տեղւոյն
մտաւորականութիւնն ու ժողովուրդը կը
պատրաստուէին պաշտօնապէս ողբելոյս
Եղիշ Չարենցի ծննդեան 70 ամեակը:
Նոյն օրուան նոյն ժամուն միւսեւոյն կը
պատահէր Լենինականի մէջ:

Կիրովականի բոլոր յայտնի հաստա-
տութիւններուն մէջ Եղիշ Չարենցի յի-
շատակն է ի պատուի: Մ. Կորքի անուան
զրադարանին մէջ, կը ցուցադրուին յո-
րեկար քերթողին ստեղծագործութիւն-
ները՝ զանազան ժամանակներու ընթաց-
քին լոյս տեսած, զանոնք ամբողջացնե-
լով բանաստեղծին կեանքի զրուագները
պատկերող լուսանկարներով:

Ժամը 20ին, Մշակոյթի Տան երկյար-
կանի մեծակառոյց սրահը լի է բազմու-

թեամբ, որու մէկ երեւելի մասը մնացած
է սօքի, այլ լուս, կարգապահ եւ անհամ-
բեր:

Նախագահութեան բեմին կը նշմարուին
վիպասան Նոր-Այրը, Շաւարշ Վարդու-
մեան, Հենրիկ Թումանեան, Նորենց Վա-
ղարապետ, Սալիկ Հրաչեան, Սովետական
այլ Հանրապետութեանց ներկայացուցիչ
զրադէտներ եւ բանաստեղծներ, քաղաքին
արուեստագէտներէն շատեր, ինչպէս
Մառի Աթմաճեան եւ այս ամբողջը ստո-
րազրոյցը:

Հանդիսութիւնը կը բացուի հայ պե-
տական քայլերով, ապա իր ներածական
խօսքը կ'արտասանէ Կիրովականի զրա-
կան միւսուրման նախագահ Նոր-Այրը.
յաւարտ իր խօսքին՝ բեմ կը հրաւիրէ օր-
ուան պաշտօնական բանախօս՝ բանա-
ստեղծ Վաղարշակ Նորենցը, որու խօսքը
ոչ միայն ներթափանցում մըն է յորեկար
բանաստեղծի զործին՝ այլեւ մարդուն,
զազափարի եւ մատուցման անդրադուելի
քերթող-զինուորապետին: Այնուհետեւ
յաջորդաբար ելլովներ ունեցան Վ. Կիր-
ովանը, Մ. Սիւլեյմանովիչը, Ա. Վէյանը,
Ի. Մացիլաիչուսը, Վ. Կովալսկին, Ս.
Ստոյանը, Մառի Աթմաճեան՝ Փրանտահայ զրոյնե-
րու անունով, Արամայիս Սրապեան՝
Սփռուքահայ մտաւորականութեան կող-
մէ:

Ելլովներուն՝ մէջ ընդ մէջ, ինչպէս նա-
եւ անոնց աւարտման՝ տեղի ունեցաւ ու-
նախմբութեան ղեկարուստական մասը,
որու ընթացքին ըստ մեզի ա'լ աւելի ան-
միջական, հաղորդական ներկայացաւ Ե-
ղիշ Չարենցը, որովհետեւ մատաղատի
ազնականներ, զոյնողոյն զգեստաւորեալ՝
երգեցին եւ արտասանեցին բանաստեղծին
զործերէն, անթերի ապրումով եւ անխո-
ցելի կատարելութեամբ:

Չարենցեան հանդիսութիւնները, որոնց
մէկ մասը միայն յաջորդեցանք նիւթ ընել
մեր արձակին, ունեցան իրենց տար-
բերակները՝ խնձոյքներու լայնաշունչ սե-
ղաններուն շուրջ, երեւանի մէջ, ի Ս. Էջ-
միածին, Հոկտեմբերեան, Այդը լճի ա-

փունքին, Կիրովական, Լենինական, Սե-
Սեւանի եղերքին:

Պետական մարդիկ, զրադէտներ եւ բա-
նաստեղծներ, նկարիչներ եւ քանդակա-
զործներ, անապատելի բանաստեղծու-
թեան կրակէն հրահրեալ՝ այդ օր եղբայ-
րացան, երգի, խօսքի, սլարի եւ արտա-
սանութեան իրերայաջորդ թոհուրոհին
մէջ:

Այս բոլորը ի մի զօդող, կազմակերպող
յանձնախումբը ղերելու է ամէն զնահա-
տանքէ. մարդիկ՝ որ առաւօտեան ժամը
7.30ին մինչեւ ուշ գիշեր զօրծի վրայ
էին, յուզիչ նուիրումով եւ անհափ զո-
հարեութեամբ տողորեալ. այդ կտրիճ-
ներուն անունները. — Մարօ Մարգար-
եան, Մետաքսէ, Հրաչեայ Յովհաննէ-
սեան, Ստեփան Ալաջաճեան, Լեւոն Մի-
րիջանեան, Գրիգոր Բեքմեղեան:

Կը վերջացնենք մեր զրութիւնը՝ մըտ-
քերնիս կեդրոնացնելով նախ Սեւանայ
լճին, որու վրայ երկու ինքնամուղ, թե-
ւաւոր հրաշալի շողմակոյցներով հրա-
ւիրեալներու հոծ բազմութիւնը շրջեցաւ
աւելի քան երկուքուկէս ժամ, ու այս ա-
ռիթով է որ վերահասու եղանք՝ թէ հայ-
րենական լճին ափունքները կը կենդանա-
նան շինութիւններով, թէ զայն շրջապա-
տող լեռներուն զազաթներուն խի կը
նշմարուին ցորենի արտերը, ղեղին՝ աշ-
նանային արեւուն ղեղնորակ շերտաւո-
րումներուն նման:

Երկրորդը՝ Սարտարապատի դաշտն է,
որու կատարած ճակատադրական ղերին
անդամ մը եւս իրադեկ եղանք Եղ. Թօփ-
չեանի վերջիւումով: Մինչ կը խօսէր մեր
բարեկամը՝ արեւը կը շառագունէր հայ-
րենական աշխարհի այդ պանծալի հողա-
շերտը, ու ինձ այնպէս կը թուէր, որ
ընդմէջ երկնի եւ երկրի կը թեւածէին ե-
րկուսն հերոսները, զինու եւ զօրջներու
թոհուրոհ մը մէջ, մեր ներկայ վերա-
ծաղկեալ Հայրենիքին սիրոյ եւ գուրգու-
րանքին առարկայ...:

Միլանոյ

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ